Կառուցողական և ոչ կառուցողական հաղորդակցություն

Հոկտ. 28, 2016. ԵՀՀ

Տերմիններ

Կոնստրուկտիվ կոմունիկացիա. կառուցողական հաղորդակցություն, (հաղորդակցման ժամանակ) համագործակցության սկզբունք

Այն հաղորդակցությունը, որի դեպքում. 1) հաղորդումն ուղարկողը նկատի ունի հենց այն, ինչ ասել է, չի օգտագործում իմաստն աղավաղող մեթոդներ, ցանկանում է, որպեսզի ստացողը ստանա հենց այն հաղորդումը, որն ինքն ուղարկել է, և հույս ունի, որ ստացողը կհասկանա հենց այնպես, ինչպես ինքը նկատի է ունեցել. 2) հաղորդումը ստացողը հասկանում է ուղարկողի՝ վերը բերված նպատակները, և հավելյալ իմաստ չի դնում, վերծանում է հաղորդումը, իր լավագույն հասկացածով, այնպես, ինչպես դա կցանկանար ուղարկողը, և վստահում է, որ ուղարկողն այլ բան նկատի չի ունեցել, բացի հաղորդման անմիջական իմաստից:

https://en.wikipedia.org/wiki/Cooperative_principle

Կոնտեքստ

Այն ամեն նշանայինը, որ շրջապատում է հաղորդումը, հաղորդողին և ստացողին, որքան որ հաղորդողն ու ստացողը կարող են դա հասկանալ, իմանալ կամ հաշվի առնել:

Կոմունիկացիոն իրադրություն

Այն հանգամանքները, որոնցում տեղի է ունենում հաղորդակցությունը: Նշենք, որ հաճախ կոնտեքստն ու կոմունիկացիոն իրադրությունը մեկ կամ մեկ այլ տերմինով միասնաբար են ներկայացվում, քանի որ իրադրությունը նույնպես բառերով, այսինքն նշաններով է ներկայացվում կամ նկատի առնվում:

Պրեսուպոզիցիա. կանխենթադրույթ

Այն նախնական հանգամանքները, որոնք պայմանավորում են տվյալ հաղորդումը կամ նրա բովանդակությունը: Կոնստրուկտիվ կոմունիկացիայի դեպքում հաղորդումն ուղարկողը համարում է, որ պրեսուպոզիցիան «ճիշտ» (այսինքն՝ ուղարկողի ուզած իմաստով) կվերծանվի ստացողի կողմից:

Իմպլիկատուրա

Այն, ինչ բխում է հաղորդումից: Կոնստրուկտիվ կոմունիկացիայի դեպքում հաղորդումն ուղարկողը համարում է, որ իմպլիկատուրան «ճիշտ» կմակաբերվի ստացողի կողմից:

Պրեսուպոզիցիան և *իմպլիկատուրան* միշտ չէ, որ հեշտությամբ տարբերվում են միմյանցից: Օրինակ, «Ես քնել եմ ուզում» նախադասության պրեսուպոզիցիան կարող է լինել «Ես հոգնած եմ, այդ պատճառով քնել եմ ուզում», սակայն այն կարող է սխալմամբ ընկալվել որպես իմպլիկատուրա՝ «Ես քնել եմ ուզում, որովհետև հոգնած եմ»:

Պրեսուպոզիցիան և *իմպլիկատուրան* կարող են նաև հաճախ լինել ոչ լրիվ կամ ոչ ճշգրտորեն միմյանցից տարրաբաժանելի:

Ենթատեքստ

Այն ամենը, ինչ ասված չէ, սակայն մակաբերելի է հաղորդումից: Երբեմն *պրեսուպոզիցիան* և *իմպլիկատուրան* կարող են սպառել ենթատեքստը, երբեմն՝ ոչ:

Ինտերպրետացիա. մեկնաբանություն

Այն, թե ինչպես է հաղորդումը ստացողը հասկանում հաղորդման իմաստը. եթե ըստ կոնստրուկտիվ կոմունիկացիայի սկզբունքի՝ ապա այն կարելի է անվանել «օբյեկտիվ» մեկնաբանություն. եթե «շեղվում է» ուղարկողի մտադրությունից կամ չգիտի, շեղվում է թե ոչ՝ ապա «սուբյեկտիվ» մեկնաբանություն: Այս բաժանումները հաճախ անճշգրիտ են: Ենթատեքստը հաճախ մեկնաբանության արդյունք է: Հաճախ «ենթատեքստ» հասկացությունն օգտագործվում է այն դեպքում, երբ հաղորդման / տեքստի պրեսուպոզիցիան, իմպլիկատուրան կամ այլ անուղղակի տարրերը, մեկնաբանողի կարծիքով, հաղորդումն ուղարկողը հատուկ է քողարկել, այսինքն նպատակ է ունեցել ենթատեքստով հավելյալ բան արտահայտել (խախտելով կոնստրուկտիվ կոմունիկացիայի սկզբունքը):

Էքսպլիկացիա

Արտահայտել տեքստի / հաղորդման այն մասը, որն արտահայտված չէր (ինչպես մենք արեցինք վերը բերված օրինակում՝ էքսպլիկացնելով պրեսուպոզիցիան): Կարելի է էքսպլիկացնել տեքստի ենթատեքստը, կոմունիկացիոն իրադրությունը, և այլն:

Պրագմատիկա

Այն բոլոր պրակտիկ հանգամանքները, ներառյալ ասողի ու ստացողի նպատակադրումները, որոնք շրջապատում և պայմանավորում էին հաղորդակցությունը: Եթե կոմունիկացիոն իրադրությունն այն հանգամանքներն են,

որոնք կախված չեն ասողի կամ ստացողի կամքից ու գիտակցությունից, ապա պրագմատիկ հանգամանքները նրանք են, որոնք կախված են:

Մոդուս

Այն ամենն այդ պրագմատիկայի հանգամանքներից, որն արտահայտվել է հաղորդման լեզվի մեջ, նշանով, իմաստային ձևով, հնչերանգով կամ այլ կերպ:

Դիկտում

Հաղորդման բուն բովանդակությունը:

Ոճ

Լեզվական և խոսքային արտահայտչամիջոցները, որոնք օգտագործված են հաղորդման մեջ: Կարևոր է տարբերել, մի կողմից, *օֆիցիալ* ոճը, մյուս կողմից՝ *ինտիմ* և *«ախպերական»* (*ֆամիլյար*) ոճերը:

Վերլուծություն

Հաղորդման, տեքստի և հաղորդակցության քննարկումն ըստ վերը բերված, «քերականական» (ով, ինչ արեց, ինչ հանգամանքներում, ինչպես նն) և կամ այլ հավելյալ հատկանիշների, հասկանալու համար, թե ի՛նչ է ասում հաղորդումը, ինչու՛ է դա ասում, ինչպե՛ս է ասում (կապված նպատակի ու ասելիքի հետ), և այլն:

Քննարկման սխեմա

1) նախաբան. մեդիան՝ պրովոկատիվից մինչև ֆառշ
2) կոնստրուկտիվ կոմունիկացիա
3) պրեսուպոզիցիա, ինպլիկատուրա և այլն
3) ինտերպրետացիա՝ կոնտեքստի ընդլայնում
4) մեսիջը խոտորելու ձևերը (ինտերնետի ցուցակը)
5) վերլուծության հանգրվանները (ով, ինչ արեց, երբ, ինչի համար՝ բովանդակություն/դիկտում. մոդուս/պրագմատիկա՝ ով, ինչ գրեց, որտեղ, ինչի համար... և այլն)
6) աշխատանք խմբերում
7) խմբերից որոշների աշխատանքի ներկայացում